ՀՏԴ 929:947.925 Սարգսյան

Doi:10.54503/0135-0536-2024.2-263

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)*

Լրացավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայագիտության ընագավառում գգալի վաստակի տեր, երկարամյա դասախոս և լավագույն ընկեր Սուրեն Սարգսյանի 70-ամյա հոբելյանը:

Ծնվել է 1954 թ. հունիսի 10-ին Սարգսյանների մեծ գերդաստանում: Գերազանցությամբ ավարտելով ՀԽՍՀ Մարտունու շրջանի Զոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ Ս. Սարգսյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) իրավաբանական ֆակուլտետը, սակայն ճակատագրի բերումով կիսատ է թողել ուսումը: Այնուհետև՝ 1988 թ., գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետը՝ ընդունվել է Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրան: 1991 թ. աշխատում է Պատմության ինստիտուտում՝ սկզբում որպես կրտսեր, հետո՝ ավագ, ապա՝ առաջատար գիտաշխատող: 1997-ից դասավանդում է Երևանի մի շարք բուհերում: Պատմական գիտությունների դոկտոր է (2016 թ.), պրոֆեսոր (2018 թ.):

Դեռ ուսանողական տարիներին ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, նկատելով Սուրենի գիտական հակումներն ու քննական-վերլուծական կարողությունը, ոչ միայն օգնում է իր խորհուրդներով, այլև՝ դառնում նրա գիտական ղեկավարը:

Չնայած 1990-ական թվականների պատերազմական իրավիճակին՝ Ս. Սարգսյանը շարունակել է գիտահետազոտական և դասախոսական աշխատանքները: Լույս են տեսել անխոնջ ու աշխատասեր մտավորականի տասնչորս մեծածավալ մենագրությունները, ընդ որում, դրանցից մեկը ռուսերեն՝ Մոսկվայում, և երկուսը՝ Կահիրեում: Միաժամանակ համահեղինակ է Հայոց պատմություն, Հայ պարբերական մամուլի պատմություն, Հայ ազգային ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914 թթ.) հիմնարար երկերի, Հայկական հանրագիտարանի «Հայաստան» հատորի մի քանի մեծածավալ հոդվածների, ինչպես նաև՝ Կահիրեում լույս տեսած «Պատասխան առ որ անկ է» (2014 թ., 60 էջ) և «Գրախո-

* Ներկայացվել է 22. V. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:

սականներ եւ անդրադարձներ Պերճ Թէրզեանի գիրքերուն մասին եւ իր հետ եղած հարցազրոյցներ» (2024 թ., 278 էջ) գրքերի: Ս. Սարգսյանը հեղինակ է 200-ից ավելի գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել հայրենի բարձրակարգ գիտական ամսագրերում, ինչպես նաև՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում ու այլ երկրներում: Դիտողունակ և շրջահայաց մտավորականը նաև հեղինակել է ավելի քան երկու տասնյակ գրախոսականներ:

Ս. Սարգսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են գտնվում արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, հայ մամուլի պատմությունը, հայ ազգային կուսակցությունների պատմությունը, ազատագրական պայքարի նվիրյալները և ժամանակակից կարևոր իրադարձությունները: Նա ակտիվորեն մասնակցում է նաև միջազգային ու հանրապետական գիտաժողովների և հանդես է գալիս գիտական նորույթներ պարունակող և հիմնախնդիրներ պարզաբանող զեկուցումներով: Միայն 2018 թ. Ս. Սարգսյանը ՀՀ-ում և Լիբանանում զեկուցումներով է հանդես եկել 5 գիտաժողովում, որոնցից 3-ը՝ միջազգային ու համահայկական և կարդացել պատմագիտության բնագավառում չուսումնասիրված հիմնախնդիրների վերաբերյալ:

Հաղթել է ՀՀ ԿԳՆ-ի հայտարարած «Ամենաարդյունավետ գիտնական» մրցույթում և ճանաչվել 2018 թ., ապա նաև՝ 2019 թ. լավագույն հայագետ: 2018–2020 թթ. եղել է Գիտության պետական կոմիտեի թեմատիկ ֆինանսավորման և գիտության բնագավառում մրցանակներ շնորհող հանրապետական մրցույթային հանձնաժողովի նախագահ: Գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց՝ Սուրենը նաև ԲՈԿ-ի ցուցակում երկար տարիներ գտնվող «Երկիր և տարածաշրջան» միջազգային հանդեսի գիտական խմբագիրն է և խմբագրականների անփոփոխ հեղինակը:

Ս. Սարգսյանի առաջին՝ «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908–1921 թթ.» մենագրությունը (2009 թ., 246 էջ) նվիրված է հայ անդրանիկ Արմենական և հայրենիքում ու Սփյուռքում պատկառելի դերակատարություն ունեցող Ռամկավար Ազատական կուսակցություններին շաղկապող միջանկյալ օղակի՝ մինչ այդ չուսումնասիրված պատմությանը, արխիվային և այլ նյութերի հիման վրա, որոնց մեծ մասն առաջին անգամ դրվեցին գիտական շրջանառության մեջ: Աղբյուրագիտական հենքով գրված այդ շահեկան մենագրությունում ներկայացված է ՀՍՌ կուսակցության ձևավորման գործընթացը, բացահայտված են նրա սոցիալական արմատները, ներկայացված են նշանավոր գործիչները: Ցույց է տրված ՀՍՌԿ-ի տեղն ու դերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում:

Հաջորդը՝ «1885–1908 թթ. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ» ուսումնասիրությունն է (2010 թ., 140 էջ): Այստեղ հավաքվել և մեկտեղվել են Հայ ազգային-ազատագրական մարտերի՝ 1885–1908 թթ. իրադարձությունների մասին Արմենական կուսակցության գաղափարախոսությունն ու նշանավոր գործիչների տեսակետները: Քանի որ պատմության դասերն ինքնանպատակ չեն, Ս. Սարգսյանն իր ուսումնասիրության մեջ հստակորեն նախանշել է կուսակցության գաղափարական այն մոտեցումները, որոնք, այսօր ժամանակի

քննությունը բռնելով, արդարացվել են կամ չեն արդարացվել և գնահատականներ է տալիս դրանց արդեն այսօրվա տեսանկյունից:

Հայրենի և Սփյուռքի գիտական շրջանակներում նշանակալի հաջողություն ունեցավ գիտնականի հաջորդ՝ ««Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում» ստվարածավալ մենագրությունը (2014 թ., 680 էջ), որի շնորհանդեսը տեղի ունեցավ Բեյրութում: Մենագրությունը նվիրված է XIX դ. 80-ական թվականների հայ ժողովրդի զարթոնքի ակունքներում կանգնած արևմտահայ նշանավոր գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի կյանքի ու գործունեության և նրա հոգեզավակ հայ քաղաքական մամուլի առաջնեկ «Արմենիա» պարբերականի պատմության լուսաբանմանը: Ներկայացված է «Արմենիայի» անփոխարինելի դերակատարությունն ազգային-ազատագրական գաղափարախոսության մշակման ու այն ժողովրդի սեփականությունը դարձնելու կարևոր գործում:

Հատկապես ռուսախոս շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացրեց հեղինակի հաջորդ՝ «Периодическое издание “Армения” у истоков армянской национально-освободительной идеологии» *աշխատությունը (2015 թ., Մոսկվա, 201 էջ), որը նվիրված է հայ ազատագրական շարժման գաղափարախոսության մեջ խոր հետք թողած «Արմենիա» թերթին: Հեղինակը հանրագումար է բերել ժամանակի ազատագրական գաղափարախոսության ձևավորման և բուն այդ շարժման հետ ունեցած՝ այդ թերթի աղերսները: Աշխատության չորս գլուխներում ընդգրկված են միմյանց հարակից հիմնահարցեր, որոնց հետազոտության առանցքն ու կենտրոնը շարունակ մնում է «Արմենիան»՝ ազատագրական շարժման գաղափարախոսության մեջ իր որոշակի ներդրումներով ու անհատականությամբ: Իր շոշափած հարցերին հեղինակը մոտեցել է գիտական բարեխղճությամբ և փաստերի բազմակողմանի լուսաբանությամբ, որը նրան հնարավորություն է տվել հասնել գրքի ծավալից շատ ավելի տպավորիչ ինքնատիպ ընդհանրացումների ու եզրակացությունների:*

Հայոց պատմության կարևորագույն էջերը միշտ գտնվում են Ս. Սարգսյանի ուշադրության կենտրոնում: Դրա անմիջական արգասիքը եղավ նրա հերթական «Սանահինի 1050-ամյա համալսարանը. համառոտ պատմություն» ուսումնասիրությունը (2016 թ., 160 էջ): Այն աշխարհի հնագույն կրթօջախներից է, պատմական մեծ արժեք ու հարստություն, որը կարող է պատիվ բերել ու անսահման հպարտության զգացումներ առաջացնել, միևնույն ժամանակ՝ հնարավորություն աշխարհին ապացուցելու, որ, չնայած ցեղասպանելով ու հայրենազրկելով տարածաշրջանի բնիկներ հայերին, թուրքերը ոչ միայն տիրացել ու վայելում են մեր ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները, այլև հավակնություն են հայտնում ի սկզբանե հայկական եղած տարածաշրջանի նկատմամբ: Այնպես որ, այսօր մարտահրավերներին արժանիորեն պատասխանելու համար, առավել քան կարևոր է ու անհրաժեշտ վեր հանել մեր պատմական անցյալը՝ գնահատելով ու նորովի մատուցելով աշխարհին: Հենց այդ առաքելության գիտակցությամբ է գրված Սանահինի համալսարանի պատմությանը նվիրված այս ուսումնասիրությունը:

Ս. Սարգսյանի հաջորդ՝ «Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը և «Արմենիա» պարբերականը» ծավալուն մենագրությունը

(2018 թ., 493 էջ), նվիրված է արևմտահայության զարթոնքի նվիրյալ և ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի կյանքի և հասարակական-քաղաքական գործունեության լուսաբանմանը: Օգտագործված վավերագրերի (գլուխ մասն առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ), հուշագրությունների, մամուլի և թեմային առնչվող մասնագիտական գրականության ծանոթ հեղինակը, որ քաջատեղյակ է բարձրացված հարցերին և քննական-վերլուծական մոտեցում է դրսևորում, Մ. Փորթուգալյանի գործունեությանն անաչառ, անկողմնակալ գնահատականներ է ներկայացնում: Դրանք և վերջինիս կերպարը գունազարդելուց ու հերոսականացնելու միտումից զերծ են, որոնք Ս. Սարգսյանի մենագրության բնորոշ կողմերն են: Մենագրությունը, որն առանձնանում է նաև անթերի շարադրանքով, հարուստ բառապաշարով և գեղեցիկ, ակնահաճո ձևավորմամբ, արժեքավոր ներդրում է հայ պատմագիտության, հրապարակախոսության ու հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրության գործում:

Հայ մամուլի պատմության ուսումնասիրության գործում նոր խոսք և ներդրում է Ս. Սարգսյանի «Արևելահայ ռամկավար մամուլը 1918–1920 թթ.» (2019 թ., 190 էջ) մենագրությունը: Այն նվիրված է Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին ռամկավարների հրատարակած «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն», «Վան-Տոսպ», «Հայաստանի ձայն» և «Հայկաշեն» պարբերականների պատմությանն ու դրանցում հրապարակված կարևորագույն նյութերի քննական վերլուծությանը: Ներկայացվում են Առաջին հանրապետության գոյության ընթացքում ռամկավարների արևելահայ հատվածի ներկայացուցիչ, ՀՅԴ-ից հետո ամենահզոր քաղաքական ուժի՝ Հայ ժողովրդական կուսակցության ու արևմտահայ գաղթականության շահերն արտահայտող արտախորհրդարանական Ռամկավար և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունների տեսակետները ՀՀ արտաքին ու ներքին կյանքի և սփյուռքահայությանը վերաբերող հիմնախնդիրների վերաբերյալ:

Հայ ազգային-ազատագրական պայքարի հիմնախնդիրները մշտապես եղել են Ս. Սարգսյանի ուշադրության կենտրոնում: Բնականաբար, նրա տեսադաշտից չէր կարող վրիպել այնպիսի անհատականություն, ինչպիսին էր ազատագրական պայքարի աննկուն մարտիկ, հասարակական-քաղաքական և կուսակցական գործիչ, գրող, թարգմանիչ Միհրան Տամատյանի լուսավոր կերպարը: Նա ազատագրական պայքարի այն առանձնահատուկ գործիչներից էր, ով անհրաժեշտության դեպքում զենքը ձեռքին քաջաբար կռվում էր անարգ ոսոխի դեմ, իսկ խաղաղ պայմաններում՝ պայքարում խոսքի ուժով, ասել է թե՝ հրապարակախոսությամբ: «Միհրան Տամատյանի հրապարակախոսություն» (2020 թ., 350 էջ) աշխատության մեջ քննական մոտեցումներով ներկայացված են «Փիւնիկ», «Արեւ», «Լուսաբեր-Արեւ» և այլ թերթերում Մ. Տամատյանի հեղինակած հրապարակումները, դրանցում տեղ գտած Հայկական հարցի, հայության ապագայի, կամավորական շարժման, գաղթականության ու անկախ պետականություն ունենալու մասին նրա տեսական-գաղափարական մոտեցումները: Ընդգծվել է, որ Տամատյանը վեր է կանգնել անձնական ու կուսակցական շահերից: Հեղինակին հաջողվել է պարզաբանել իր առջև դրված խնդիրները և մատնացույց անել դրանց լուծման ուղիները:

Անխոնջ հետազոտողի հերթական ուսումնասիրությունը՝ «Գահիրէի ՀԲԸՄի Տեղեկատու եռամսեայ պարբերականը» (2022 թ., 122 էջ), նվիրված է Սփյուռքում երկար տարիներ լույս տեսնող թերթերից մեկին, հայրենի պատմագիտության կողմից ուշադրության ու դրա՝ հատկապես հայապահպանության գործում մեծ ներդրման և յուրակերպ գնահատանքի դրսևորում է: Ակներև է, որ Ս. Սարգսյանը, ջանադիր հետազոտողին վայել թերթատելով պարբերականի բոլոր տարիների լույս տեսած համարները, անաչառ մոտեցումներով ու դիպուկ բնորոշումներով ընդհանրացումներ է կատարել: Ընթերցողին հավաստիացրել, որ մեր օրերում, երբ ամենուր իշխող է դարձել օտարամոլությունը, հայեցի դիմագիծ ունեցող և հայ մարդուն հայ պահող պարբերական ունենալը թե՛ ճոխություն է, թե՛ դժվարագույն գործ:

Պատմաբանի հետազոտող միտքն ու քաղաքացիական առողջ կեցվածքը Ս. Սարգսյանին չէին կարող անտարբեր թողնել երկրում ընթացող բախտորոշ իրադարձություններից: Ուստի միանգամայն բնական է, որ նա, հանդես բերելով իրեն բնորոշ աշխատասիրություն և վճռականություն, հրապարակախոսական հոդված-վերլուծականներով հանդես է եկել հայրենի և Սփյուռքում լույս տեսնող մեծ թվով պարբերականներում: Այդ հրապարակումների որոշ մասը մեկտեղված է հեղինակի «Օրերի հորձանուտում» ժողովածուում (2022 թ., 436 էջ): «Գիտական կոչում ու տիտղոս կրող մեր մասնագետները, – խոսքը վերաբերում է հատկապես պատմաբաններին, գրականագետներին, արվեստաբաններին և այլն,– սովորաբար չեն սիրում մամուլի հետ աշխատել, թերևս լրագրությունն ու հրապարակագրությունը համարելով զիջում տիտղոսակիր գիտնականի իրենց բարձրունքներից, կորուստ՝ ժամանակի ու մտքի գոհարների, թեև, մյուս կողմից, գրեթե երբեք չեն հրաժարվում հարցազրույցի հրավերներից: Քիչ են, շատ քիչ են բացառությունները, որոնցից պ. գ. դ., պրոֆեսոր, պատմագիտական մեծաքանակ աշխատությունների հեղինակ Սուրեն Սարգսյանն է», – գրում է «Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր, ՀՊՄՀ-ի պրոֆեսոր Հակոբ Ավետիքյանը: «Այո, երջանիկ բացառություն-ներից է նա, ով պարբերաբար հոդված ու ակնարկ է ստորագրում հայրենի և սփյուռքյան մի շարք պարբերականներում, ռեպլիկ ու հակիրճ մեկնաբանություններ՝ համացանցում: Հատկապես մեր խառնակ օրերում, երբ հասարակությունն այնքան կարիք ունի հավասարակշիռ խոսքի, պրոֆեսոր Ս. Սարգսյանը տեղական, տարածաշրջանային ու միջազգային անցուդարձերի ու նորանոր զարգացումների վերաբերյալ իր խոհերն ու մտորումներն է կիսում ընթերցողական լսարանի հետ, վերջինին մղելով դրանք դիտարկել պատմական պարունակի, պատմական զուգահեռումների մեջ, մանավանդ երբ խոսքը վերաբերում է մեր ժողովրդին ու պետությանը»:

Ս. Սարգսյանը ՀՀ պաշտպանության նախարարության դասախոսական կազմի հետ 2011– 2018 թթ. այցելել է Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի զորամասերը, որտեղ զինծառայողների հետ ունեցել է զրույցներ, ներկայացրել է Հայոց պատմության, հատկապես՝ ազգային-ազատագրական շարժումներին նվիրված դասախոսություններ:

Երկարամյա անբասիր աշխատանքի համար Ս. Սարգսյանը պարգևատրվել է ՀԿԳՍՄ-ի ոսկե, Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված հոբելյա-

նական մեդալներով, «Գլաձոր» համալսարանի «Ոսկե հուշամեդալով», ԳԱԱ երկու շնորհակալագրերով, ԳԱԱ Վաստակագրով և այլ պարգևներով:

Շնորհավորում ենք նշանակալի վաստակի տեր, պատմաբան, ազնիվ ու անաչառ մտքի և համարձակ ու սկզբունքային քաղաքացի Սուրեն Սարգսյանի 70-ամյա հոբելյանը, մաղթում ենք առողջություն, գիտական ասպարեզում նորանոր ձեռքբերումներ:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, հայկական ոստիկանության պատմություն: Հեղինակ է 14 գրքի, փաստաթղթերի և նյութերի ժողովածուների, շուրջ 100 հոդվածի: ORCID: 0009-0006-1919-8856. rubensahakyan58@gmail.com